ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2021թ. թիվ 107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 240-Ն որոշման 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման 2.1 կետով, հիմք ընդունելով համաձայնության մասին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 24.02.2021թ. N 27/17.1/3407-2021 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2021 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Հանրակրթություն» ծրագրի (դասիչ՝ 1146) «Հիմնական ընդհանուր հանրակրթություն» միջոցառումով (դասիչ՝ 11002) նախատեսված գումարի շրջանակներում կատարել վերաբաշխում և ֆինանսական վատ վիճակում գտնվող ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության մի շարք դպրոցների լրացուցիչ հատկացնել 38840.0 հազ. դրամ՝ համաձայն կից հավելվածի:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2/25/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 25
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. փետրվարի 25-ի
թիվ 107-Ա որոշման

Ց Ա Ն Կ

Ֆինանսական վատ վիճակով պայմանավորված լրացուցիչ գումար հատկացվող Լոռու մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների

NN	Կազմակերպության անվանումը	գումար /հազ. դրամ/
1	«Վանաձորի թիվ 2 հ/դ» ՊՈԱԿ	1750.0
2	«Վանաձորի թիվ 9 հ/դ» ՊՈԱԿ	2960.0
3	«Լեռնապատի մ/դ» ՊՈԱԿ	2700.0
4	«Շահումյանի մ/դ» ՊՈԱԿ	2600.0
5	«Վահագնիի մ/դ» ՊՈԱԿ	400.0
6	«Փամբակի հ/դ» ՊՈԱԿ	1700.0
7	«Դարպասի մ/դ» ՊՈԱԿ	1550.0
8	«Եղեգնուտի մ/դ» ՊՈԱԿ	1780.0
9	«Դսեղի մ/դ» ՊՈԱԿ	4850.0
10	«Թեղուտի մ/դ» ՊՈԱԿ	300.0
11	«Լորուտի մ/դ» ՊՈԱԿ	300.0
12	«Մղարթի հ/դ» ՊՈԱԿ	1450.0
13	«Նեղոցի հ/դ» ՊՈԱԿ	400.0
14	«Սպիտակի թիվ 4 հ/դ» ՊՈԱԿ	1350.0
15	«Սպիտակի թիվ 3 հ/դ» ՊՈԱԿ	500.0
16	«Գեղասարի մ/դ» ՊՈԱԿ	990.0
17	«Լեռնանցքի մ/դ» ՊՈԱԿ	450.0
18	«Կաթնաջուրի մ/դ » ՊՈԱԿ	1480.0
19	«Ղուրսալի մ/դ» ՊՈԱԿ	995.0
20	«Մեծ Պարնու մ/դ» ՊՈԱԿ	480.0
21	«Նոր Խաչակապի մ/դ» ՊՈԱԿ	410.0
22	«Շենավանի հ/դ» ՊՈԱԿ	990.0
23	«Սարամեջի մ/դ» ՊՈԱԿ	985.0
24	«Ստեփանավանի վարժարան» ՊՈԱԿ	1450.0
25	«Ստեփանավանի թիվ 6 հ/դ» ՊՈԱԿ	700.0
26	«Ագարակի մ/դ» ՊՈԱԿ	500.0

27	«Ամրակիցի մ/դ» ՊՈԱԿ	450.0
28	«Լեռնահովիտի մ/դ» ՊՈԱԿ	1890.0
29	«Վարդաբլուրի մ/դ» ՊՈԱԿ	480.0
30	«Յաղդանի հ/դ» ՊՈԱԿ	650.0
31	«Միխայելովկայի մ/դ» ՊՈԱԿ	1350.0
Ընդամենը		38840.0

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2/25/2021

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ